

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

«Մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

25.05. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

Գ.Մարկոսյան -մարզպետի տեղակալ
Վ.Խաչատրյան -գլխավոր քարտուղարի տեղակալ
Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս.Գրիգորյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական
Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

Օրակարգում`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Փոխմարզպետ` Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար` Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

Հանձնարարվեց

1. «Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել ստորաբաժանումների աշխատակիցների կողմից արտակարգ դրության ռեժիմի կանոնների պահպանման նկատմամբ:

2. «Մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին`

ա/ Վանաձոր քաղաքի Բուլղարական տնակային ավանի վերաբերյալ անհրաժեշտ ցուցակները, համապատասխան առաջարկություններով, տրամադրել Վանաձորի քաղաքապետին և ներկայացնել ստացվող տեղեկատվությունը` երկշաբաթյա պարբերականությամբ:

բ/ 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել վերջնական տեղեկատվություն և առաջարկություններ Լեռնապատ համայնքի հողօգտագործման պայմանագրի վերաբերյալ:

գ/ 20-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն նախորդ` թիվ 5 խորհրդակցության արձանագրության 9-րդ կետով տրված հանձնարարականի կատարման վերաբերյալ:

3. «Մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին`

ա/ Երկշաբաթյա ժամկետում ուսումնասիրել ու ներկայացնել առաջարկություններ զբոսաշրջության զարգացման հետ կապված հարցերի վերաբերյալ.

բ/ Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ մարզպետարանի կայքի աշխատանքի բարելավման և բարեփոխումների վերաբերյալ:

25/05/20

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99/